

Ռ. Ս. ՂԱԶԱՐԵԱՆ. Գրաբարի հոմանիշների բառարան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2006, 704 էջ:

Հայ բառարանագրությունը հարուստ ավանդույթներ ունի. նրա հիմքերը դրվել են V դարում, որից հետո այն աստիճանաբար զարգացել ու կատարելագործվել է: Հայ բառարանագրության բնագավառում առանձնապես աչքի են ընկնում գրաբարի բացատրական բառարանները՝ սկսած «Բառգիրք հայոց»-ից (Ալիկառնա, 1698) և վերջացած մեր օրերի բառարաններով: Այնուամենայնիվ, այդքան զարգացած բառարանագրության պայմաններում մինչ օրս մենք չունենիք գրաբարի հոմանիշներին նվիրված բառարան: Եվ, ահա, այդ բացը լրացնում է գրախոսվող աշխատանքը: Ճշմարտության դեմ մեղանշած չենք լինի, եթե ասենք, որ այդ բառարանը, ինչպես նաև բազմաթիվ այլ աշխատանքներ լույս աշխարհ չէին գա, եթե չլինեք Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությունը: Այդ հիմնարկությունն իր կետարյա գոյության ընթացքում մեծ ծառայություն է մատուցել (և շարունակում է մատուցել) աշխարհի տարբեր երկրներում գտնվող հայկական համայնքների մշակույթի ու գիտության տարբեր բնագավառների զարգացմանը: Այդ գործում անսահման մեծ է հիմնարկության հայկական բաժնի տնօրեն, դոկտոր Զավեն Եկավյանի անմիջական մասնակցությունն ու աջակցությունը: Բավական է ասել, որ 1998–2006 թթ. միայն Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը մեծ բարերարի օգնությամբ հրատարակել է շուրջ հինգ տասնյակ հայագիտական կարևոր աշխատություններ, որոնցից են Թ. Հակոբյանի, Ստ. Մելիք-Բախչյանի, Հ. Բարսեղյանի «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» 3–5-րդ հատորները, Աշոտ Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանը», Յոզեֆ Գարստի «Գիլիկյան հայերենի պատմական քերականությունը», Հայնրիխ Հյուբշմանի «Հայերենի քերականությունն ու հայագի-

տական ուսումնասիրությունները», Ն. Ա. դրնցի հայագիտական ուսումնասիրությունների Ա, Բ հատորները (Բ–Ե հատորները լույս կտեսնեն 2007 թթ.) և այլն:

Եվ, ահա, Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության շնորհիվ հայագետների սեղանին դրվեց Ռ. Ղազարյանի «Գրաբարի հոմանիշների բառարանը», որի կարիքը շատ վաղուց էր զգացվում: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Ղազարյանը 1970-ական թվականներից հայտնի է որպես անվանի բառարանագետ, բառարանագիր, լեզվաբան-հայագետ: Եվ, ահա, հրապարակի վրա է նրա «Գրաբարի հոմանիշների բառարանը», որը նվիրված է V–XI դդ. գրաբար ինքնուրույն և թարգմանական երկերում գործածված հոմանիշ բառերին: Դա, իր տեսակի մեջ լինելով առաջինը, հեղինակից բարդ ու դժվարին աշխատանք է պահանջել: Աշխատանքի ընթացքում բառարանագրի ուղեցույց են եղել Նոր հայկազյան բառարանը, իր իսկ կազմած «Գրաբարի բառարանը», Աշոտ Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանը» և այլ աշխատություններ:

Ռ. Ղազարյանի բառարանում յուրաքանչյուր հոմանշային շարքը գլխաբառի հետ կազմում է մեկ բառահոդված, որում տեղ են գտել առավել կարևոր հոմանիշները: Բառահոդվածները ներկայացվում են հետևյալ կերպ. նախ բնութագրվում է գլխաբառը, այն է՝ արվում են խոսքիմասային ու մասնագիտական նշումներ, ապա բերվում են հոմանիշները: Օրինակ՝

ԲԱՐԵՂԱՐ, ա. 1. Բարեգործ, երախտագործ, երախտավոր: 2. Բարերական:

Ինչպես երևում է բառահոդվածից, առանձնացված են նաև բառահոդվածի կազմում եղող բազմիմաստ հոմանիշների տարբեր նշանակությունները և համարակալված են արաբական թվանշաններով:

Առանձնացված են նաև համանուն բա-
ները, այսպես՝

ԱՌԱՋՆՈՐԴ՝, թ. ա. Առաջին, առաջնե-
րորդ:

ԱՌԱՋՆՈՐԴ՝, գ. 1. ճանապարհացոյց: 2. Ուղղիչ, վարիչ, հեղինակ, իշխան, վերակա-
ցու, պարագլուխ, պետ: 3. Կնքահայր: 4. Մա-
տենագիր, պատմիչ, օրէնստւոյց: 5. Սկզբնապատճառ, ուսուցիչ:

Բայերը ներկայացված են անորոշ դեր-
բայի ձևով: Ի լծորդության բայերը տարբե-
րակելու համար դրանց անորոշ դերբայի
կողքը՝ փակագծերում, տրված է սահմանա-
կան եղանակի ներկա ժամանակի եզակի
թվի առաջին դեմքի վերջավորությունը. օրի-
նակ՝

ԲԱԶՄԵԼ (իմ), չբ. նստել, հանգչել, գետե-
ղել: ՄԿՄԱՆԵԼ (իմ), հբ. Ձեռն ի գործ առնել՝
արկանել, սկսնուլ, սկզբնել, սկզբնաւորել:

Առանձնացված են նաև տվյալ գլխաբա-
ռով կազմված դարձվածային միավորները և
տրված են գծիկով, նոր տողից, ինչպես, օրի-
նակ՝

ԳԱՏԱՐ, գ. 1. ծագ, ծայր, գլուխ: 2. Գա-
զաթն: 3. Վերջ, ավարտ:

– Ի ԳԱՏԱՐ ԱԾԵԼ. Աւարտել, կատարել,
իրագործել, գլխաւորել:

Այն դարձվածային միավորները, որոնց
գերադաս անդամն անկախ գործածություն
չունի, ներկայացվել են որպես ինքնուրույն
գլխաբառեր. օրինակ՝

ԾԱՂԿԱՔԱՂ ԱՌՆԵԼ՝ ԵՐԹԱԼ՝ ԼԻՆԵԼ.
1. Ծաղկաժողովով առնել: 2. Հատընտիր լի-
նել: 3. Տե՛ս ՔԱՂՀԱՆԵԼ (2):

Նույնիմաստ բառերի համար արվում է
հղում, այսպես՝

ԳԱՐ՝, գ. 1. Պարան, չուան, փոկ, լար: 2.
Տե՛ս ԳԱՐԱՆ (1):

Ծանոթանալով բառարանին՝ կարող
ենք ասել, որ այն պարունակում է ավելի
քան երեքուկես տասնյակ գլխաբառ և ընդ-
հանուր հաշվով շուրջ հարյուր հազար բառ
ու բառակապակցություն: Հետևաբար, այդ
տեսակետից բառարանը կարելի է համարել
գրաբարի հումանիշների լիակատար բառա-
րան:

Հումանշային շատ շարքեր նույնությամբ
գործածվում են նաև արդի հայերենում. օրի-
նակ՝

ԱԳԱՀ, ա. 1. Ընչասեր, ընչաքաղց, արծա-
թասեր: 2. Անյագ, ժլատ, կծծի: Տե՛ս նաև Ագի,
Ագատ, Ագգ, Ագգական, Ախորժալի, Աճել,
Այգ և այլ բառահոդվածներ:

Բայց կան նաև այնպիսի հումանիշների
շարքեր, որոնցում այս կամ այն հումա-
նիշ(ներ)ը իմաստափոխության են ենթարկ-
վել կամ էլ դարձել են հնաբանություններ. օ-
րինակ՝

ԱԳԱՀՈՒԹԻՒՆ, գ. 1. Անյագութիւն, ժլա-
տութիւն, ընչաքաղցութիւն, կծծութիւն, ար-
ծաթսիրութիւն: 2. Յանկութիւն, փափագ: 3.
Ճիգն, ջան: 4. Կաշառ:

Այս բառահոդվածի 3–4-րդ հումանիշները
ազահության իմաստով այժմ չեն գործա-
ծվում:

Բառարանն ընդհանուր առմամբ հաջող-
ված աշխատանք է. ճիշտ են ընտրված բա-
ռերի հումանշային շարքերը, համանուն բա-
ռերը տարբերակվել են բառի բազմիմաստ
ձևերից, վերցված են ընդունելի ու տարած-
ված հումանիշներ: Այնուամենայնիվ բառա-
րանը գուրկ չէ նաև թերություններից, որոն-
ցից են. ա) հղումների հարցում հստակութ-
յուն չկա. բառարանագիրը հաճախ հղում է
անում նույնիմաստ բառերի այս կամ այն ձ-
ևին, բայց այդ սկզբունքի կիրառման ժամա-
նակ հետևողականություն չի դրսևորել: Մեր
կարծիքով, այդ նույնիմաստ բառերից պետք
էր առանձնացնել առաջնայինը, այսինքն՝
հիմնական բառը և ապա մյուս ձևերը հղել
դրան: Այսպես, օրինակ՝ նա տալիս է.

ԱԽՏԱԺԵՏ, ԱԽՏԱԺԵՏ, ա. 1. Հիւանդ, հի-
ւանդոտ, ախտաւոր, ախտակիր, ցաւագար:
2. Վնասակար: Եվ այսպէ՛

ԱԽՏԱԿԻՐ, ա. Ախտաժէտ, ախտաւոր.
մինչդեռ կարելի էր ներկայացնել հղումով,
այսպէս՝ ԱԽՏԱԿԻՐ, տե՛ս ԱԽՏԱԺԵՏ (1):
Այդպէս էլ կարելի էր Յաւալից-ը հղել Ախ-
տալից-ին, Յաւալից-ը՝ Ախտալից-ին, Բնք-
նատես-ը՝ Ականատես-ին(1), Յերկար-ը՝
Երկար-ին, Խօթ-ը՝ Հիւանդ-ին, Աթոռ-ը՝
Գահ-ին(2), Թակարդ-ը՝ Ականատ-ին և
այլն: Այս սկզբունքի առավելությունն ակն-
հայտ է. նման մոտեցման դեպքում չի
խզվում նույնիմաստ բառերի կապը: Այս-
պէս, օրինակ, բառարանագիրը ԳՈՒԲ և
ՓՈՍ նույնիմաստ բառերը տալիս է հետևյալ
կերպ.

ԳՈՒԲ, գ. 1. Հոր, փոս: 2. Ջրհոր: 3. Վիհ, խորխորատ:

ՓՈՍ, գ. 1. Գուբ, խորխորատ: 2. Խրամ: Կարծում եմ՝ կարելի էր առաջնայինը համարել Գուբ-ը և հղում կատարել. ՓՈՍ, տե՛ս Գուբ (1, 3):

Աղօթս առնել // յԱղօթս կալ, Ձմտաւ ածել // Մտածել հոմանիշ գույգերի առաջնային ձևերը պետք էր համարել հարադրական կազմությունները, չէ՞ որ գրաբարում աղօթել, մտածել բայերն այնքան էլ գործածական չէին:

բ) Համառոտագրությունների ցանկում հանդիպում ենք «կ.– կրաւորական, կրաւորաձև» նշմանը, որի կարիքը չկար, քանի որ բայերի կրավորաձև խոնարհման և կրավո-

րական սեռի մասին կարելի է խոսել միայն բառարանի վկայություններ ունենալու դեպքում:

Մեր համառոտ վերլուծությունից էլ կարելի է եզրակացնել, որ Ռ. Ղազարյանի «Գրաբարի հոմանիշների բառարանը» կարևոր աշխատանք է և լուրջ ներդրում հայ մասնավորապես գրաբար բառարանագրության բնագավառում: Այդ բառարանի հրատարակությունն անհրաժեշտ ու հրատապ էր:

Բառարանը կարող է օգտագործվել ոչ միայն լեզվաբանների, այլև բանասերների, գրողների, պատմաբանների և հայ մշակույթի այլ ներկայացուցիչների կողմից:

ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ